ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/126-2019 Ք.Արտաշատ

„09„ 08 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման հավելված 2-ի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2019 թվականի հունվարի 24-ի թիվ 07 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանի 12.1 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2019 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն՝ «Ազատի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ԲՊ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

2.Նշանակել՝

1) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ փոխմարզպետ Ա. Նազարեթյանին,

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) պետ, փ/ծ գնդապետ Մ.Մարգարյանին:

3. Ստեղծել ուսումնավարժության ղեկավարման շտաբ հետևյալ կազմով.

1) խաղարկման խումբ.

ա. խմբի ղեկավար՝ Արարատի ՄՓՎ ՃԿԿ պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Ս. Գալստյան

բ. խմբի անդամ՝ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Գ. Եփրեմյան

գ. խմբի անդամ՝ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Ն. Զալյան

2) վերլուծության նախապատրաստման խումբ.

ա. խմբի ղեկավար՝ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի պետ-վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Հ. Սարգսյան

բ. խմբի անդամ՝ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Զ. Պողոսյան

գ. խմբի անդամ՝ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի գլխավոր մասնագետ, Հ. Կարապետյան

3) միջնորդական խումբ

ա. խմբի ղեկավար՝ Արարատի ՄՓՎ ԲՊ բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Գ. Թեմուրյան

բ. խմբի անդամ՝ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ ավագ լեյտենանտ Հ. Մարկոսյան

գ. խմբի անդամ՝ Արարատի ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Գր. Եփրեմյան

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) արտակարգ իրավիճակների հանձնաժողովին,

2) տարահանման հանձնաժողովին,

3) քաղաքացիական պաշտպանության ծառայություններին:

5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, փ/ծ գնդապետ Մուրադ Մարգարյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2019թ. օգոստոսի 24-ը ներկայացնել հաստատման,

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց, ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժության մասնակիցների հետ ուսումնավարժության անցկացման հարցերով,

4) կազմակերպել մարզի արտակարգ իրավիճակներում գործելու մարզի բնակչության տարահանման և կենսաապահովման պլանների ճշգրտումը,

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել սեպտեմբերի 13-ին:

6. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝

1) գործնական միջոցառումների իրականացման համար քաղաքացիական պաշտպանության ծառայություններին ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

7. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին,

2) գործնական միջոցառումների իրականացման ժամանակ խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.

3) ուսումնասիրել ,,Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին,, ՀՀ օրենքը:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

9. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

09.08.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 **Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**